Կիսամյակային լրաթերթ

Հունվար-հունիս, 2019 թ.

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

Coalition to stop violence against women

Ներածություն

Կանանց նկատմամբ գենդերային հիմքով խտրականության, կանանց իրավունքների ոտնահարման դեպքերը շարունակում են համատարած բնույթ կրել Հայաստանում: Սա, նախևառաջ, պայմանավորված է նրանով, որ դեռևս հաղթահարված չեն կանանց նկատմամբ առկա կարծրատիպերը: Մյուս կողմից էլ պետությունն առ այսօր միասնական պետական քաղաքականություն չի վարում՝ կարծրատիպերի հաղթահարման, կանանց նկատմամբ գենդերային հիմքով խտրականության բոլոր ձևերի կանխարգելման, կանանց իրավունքների ոտնահարումների կանխարգելման և դրանց հաղթահարման ուղղությամբ:

2019 թվականի առաջին կիսամյակում բազմաթիվ բարձրաստիճան քաղաքական գործիչներ իրենց ելույթներում հայտարարել են կանանց դերակատարության, կանանց ակտիվ ներգրավվածությունը քաղաքական կյանքում և կառավարման համակարգում բարձրացնելու անհրաժեշտության մասին, սակայն, գործնականում, էական փոփոխություններ նշմարելի չեն:

Մինչ օրս Հայաստանում ընտանեկան բռնության, կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության վերաբերյալ առկա տեղեկատվությունը թերի է, և գոյություն չունի գործերի վերաբերյալ համապարփակ տվյալներ հավաքագրող որևէ պետական մարմին: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի» (այսուհետ՝ Կոալիցիա) ջանքերի շնորհիվ այսօր արդեն ընտանեկան բռնության ավելի շատ դեպքեր են ի հայտ գալիս և լրատվամիջոցների ուշադրությանն արժանանում: Այդուհանդերձ, կնասպանության դեպքերը ցավալիորեն անտեսվում են հաշվետվողականության անբավարար մեխանիզմների և իրավասու մարմինների ու հանցագործի ընտանիքի՝ գործը քողարկելուն նպատակաուղղված ջանքերի պատճառով: Մինչ օրս Հայաստանում կնասպանությունների վերաբերյալ առկա տեղեկատվությունը թերի է:

Մյուս կողմից էլ օր օրի աճում են ծայրահեղական խմբերը, որոնք ամեն կերպ խոչընդոտում և վարկաբեկում են կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված թե՛ պետության, թե՛ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեությունը, թիրախավորում, թշնամանք են տարածում կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև կին իրավապաշտպանների նկատմամբ:

Թշնամական վերաբերմունքը, որ ուղեկցվում էր ատելության խոսքով և խտրականության կոչերով, հատկապես սրվեց մարտի 8-ին «Քաղաքացիական հասարակություն-Ազգային ժողով համագործակցության հարթակ՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» խորագրով միջոցառման ընթացքում, երբ տիկին Լարա Ահարոնեանը («Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ համահիմնադիր) իր ելույթում խոսեց աղքատ, հաշմադամություն ունեցող, միայնակ մայր, լեսբի, տրանս և բիսեքսուալ կանանց իրավունքների մասին, ինչի պատճառով նա ևս մեկ անգամ հայտնվեց օնլայն հարձակումների և ատելության խոսքի թիրախում:

Իսկ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի (Ստամբուլյան կոնվենցիա) տեքստի խեղաթյուրումը և վավերացման խոչընդոտումը տարբեր ծայրահեղական տրամադրված խմբերի կողմից և պետության կողմից դրան ոչ համարժեք արձագանքը կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեությունը դարձնում են էլ ավելի բարդ և դժվարություններով լի:

2019 թ.-ի առաջին կիսամյակում Կոալիցիան շարունակել է իր գործունեությունը՝ ուղղված ընտանեկան բռնության և դրա հետևանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը, գենդերային հիմքով խտրականության բոլոր դեպքերի կանխարգելմանը, ընտանեկան բռնության, գենդերային հիմքով բռնության ենթարկված կանանց շահերի պաշտպանությանը, ինչպես նաև օրենքների և քաղաքականությունների ջատագովությանը, որոնք կնպաստեն կանանց իրավունքների պաշտպանությանը կյանքի բոլոր ոլորտներում:

2019-ի առաջին կիսամյակում Կոալիցիան.

- մամուլի ասուլիսների, հայտարարությունների, զրույցների, մեդիա հոդվածների միջոցով բարձրացրել է հանրային իրազեկվածությունը ընտանեկան բռնության հիմնախնդրի շուրջ.
- կազմակերպել է տարբեր հանդիպումներ պետական պաշտոնյաների և որոշում կայացնողների հետ՝ քննարկելու ընտանեկան բռնության մասին օրենքը և ընտանեկան բռնության զոհերին տրվող պետական ծառայությունները.
- հավաքագրել է ընտանեկան բռնության դեպքերը, մասնակցել է ընտանեկան բռնության դեպքերով դատական նիստերին, զորեղացրել է ընտանեկան բռնության զոհերի կարողությունները, ինչպես նաև բարձրացրել է հանրության իրազեկվածությունը խնդրի շուրջ:

Կիսամյակային լրաթերթում հակիրճ ձևով ամփոփված է 2019-ի առաջին կիսամյակում Կոալիցիայի ծավալած գործունեությունը՝ ըստ ռազմավարական ուղղությունների:

«Մենք՝ կանայք, պետք է հասկանանք մեր խնդիրները, ինչպես նաև գիտակցենք մեր զորությունը՝ մեր հավաքական փոխաջակցության ուժը: Ինչպես ամենուր, այնպես էլ Հայաստանում կանայք փոխաջակցող են, քույրաբար օգնող: Հաճախ կարելի է հիանալ, թե ինչպես են տարբեր սերունդների և տարեկից կանայք աջակցում միմյանց, կիսում սեփական փորձը, օգնում կենցաղային գործերում, թե ինչպես են կանանց կոլեկտիվներում կիսում աշխատանքային դժվարությունները: Սակայն կանանց ընկերության և փոխաջակցության այս փորձառությունները հաճախ մնում են նեղ ընտանեկան կամ համայնքային տիրույթներում և չեն դառնում հանրային կյանքի և փորձառության մաս: Մենք ունենք կանանց համերաշխության միջավայրեր, սակայն կարիք ունենք և պետք է ընդլայնենք դրանք, պետք է զորացնենք այլ կանանց մեր աջակցությամբ»:

Լենա Նազարյան
ԱԺ նախագահի տեղակալ

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելում և նվազեցում

Կոալիցիան 2019 թ.-ի առաջին կիսամյակում շարունակել է բարձրացնել հանրության իրազեկվածությունը ընտանեկան բռնության, գենդերային հիմքով բռնության հիմնախնդիրների շուրջ՝ դրանով իսկ փոխելով այս խնդիրների շուրջ հանրային ընկալումները: 2019 թ.-ի առաջին կիսամյակում Կոալիցիայի անդամները իրազեկման նպատակով մասնակցել են բազմաթիվ հեռուստահաղորդումների, հանրային քննարկումների, հանդես են եկել պաշտոնական հայտարարություններով, մշտադիտարկել են դատական դեպքեր, Կոալիցիայի կայքում և սոցիալական մեդիայի էջերում տարաբնույթ նյութեր են հրապարակել: Կարող ենք իրավամբ փաստել, որ Կոալիցիան ունի մեծ լսարան և տարեցտարի ավելի շատ մարդկանց է հասնում՝ բարձրացնելու իրազեկվածությունը ընտանեկան բռնության, գենդերային հիմքով բռնության մասին, ինչպես նաև օգնելու մեծաթիվ կանանց, որոնք դարձել են բռնության զոհ: Տարեսկզբից Կոալիցիայի ուշադրության կենտրոնում շարունակել են գտնվել Թագուհի Մանսուրյանի և Սիրանուշ Գալոյանի դատական գործերը, որոնք Կոալիցիան մշտադիտարկել է նաև դատարանում: Այս դատական գործերը դեռևս ընթացքի մեջ են:

«Կնասպանություն. լռեցված ձայներ» զեկույցի քննարկում

Փետրվարի 19, 2019 թ.-ի Կոալիցիան իրականացրեց «Գենդերային բռնությունը Հայաստանում. խնդիրներ և իրավական կարգավորումներ» թեմայով կոնֆերանս, որի ընթացքում ներկայացվեցին «Կնասպանություն. լռեցված ձայներ» զեկույցը, Կոալիցիայի կողմից մշակված ընտանեկան բռնության տվյալների բազան, ինչպես նաև «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի մեխանիզմներին ու դրանց կիրարկման հետ կապված խնդիրները: Կոնֆերանսին ներկա էին պետական կառույցների, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: «Լռեցված ձայներ. կնասպանությունը Հայաստանում» զեկույցն անդրադառնում է 2016-17 թթ. կնասպանության դեպքերին, մասնավորապես՝ գործերի դատավարությանը և արդարադատության մատչելիությանը, ինչպես նաև կնասպանության երևույթի համակարգային և խորն արմատացած պատճառներին: Զեկույցում ներկայացված դեպքերի վերլուծության

միջոցով բարձրաձայնվում են այն կանանց պատմությունները, որոնք զրկվեցին սեփական կյանքից ուժի և իշխանության անհավասարության, արմատացած կարծրատիպերի և համընդհանուր թողտվության պատճառով: Յուրաքանչյուր պատմության շրջանակներում ներկայացվում է դատաիրավական համակարգի արձագանքը հանցագործությանը և դրա բացերը: Զեկույցը ամփոփվում է առաջարկներով, որոնք ուղղված են քաղաքականություն մշակողներին և լայն հանրությանը՝ առավել հասցեական և թիրախային քայլերի միջոցով մեղմելու և վերացնելու կնասպանության պատճառները[1]:

Ընտանեկան բռնության դեպքերով տվյալների առցանց հարթակ

Կոալիցիայի անդամ «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ն ստեղծել էր հարթակ, որը նպատակ ուներ փաստաթղթավորելու և արագ արձագանքելու ընտանեկան բռնության դեպքերին: Կոալիցիայի ջանքերով հարթակը ենթարկվել է որոշակի փոփոխությունների և այժմ արդեն ծառայում է որպես Կոալիցիայի անդամ կազմակերպությունների կողմից ընտանեկան բռնության դեպքերի տվյալները մեկտեղելու և փաստաթղթավորման միասնական համակարգ ձևավորելու գործիք[2]:

Դասընթացներ

Կոալիցիան ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցման ցերեկային կենտրոնների աշխատակիցների համար 2019 թ.-ի առաջին կիսամյակում կազմակերպել և իրականացրել է վերապատրաստման դասընթացներ՝ երկու փուլով: Աջակցման ցերեկային կենտրոնների աշխատակիցների սույն վերապատրաստումն իրականացվել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների խթանում և պաշտպանություն» ծրագրի շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ՝ Կոալիցիայի հետ համագործակցությամբ:

Դասընթացի առաջին և երկրորդ փուլերին մասնակցել են ընդհանուր մոտ 70 մասնագետներ՝ սոցիալական աշխատողներ, հոգեբաններ, իրավախորհրդատուներ, մեթոդիստներ ինչպես Երևանի, այնպես էլ մարզերում տեղակայված աջակցության կենտրոններից: Դասընթացների ընթացքում մասնակիցների հետ քննարկվել են հետևյալ թեմաները.

- գենդեր, գենդերային հավասարություն և գենդերային խտրականություն,
- գենդերային բռնություն, սեռական բռնության գենդերային ասպեկտները,
- ընտանեկան բռնություն, տեսակները, դրսևորումները,
- տրավմա և աջակցություն,

[1] http://coalitionagainstviolence.org/hy/publication/femicide2018/
[2] https://rru.swv.am/

- ընտանեկան բռնության դրսևորումները ՄԻԱՎ-ով ապրող անձանց նկատմամբ,
- ընտանեկան բռնությունը և հաշմանդամություն ունեցող անձինք,
- ընտանեկան բռնության դեպքերին արձագանք իրավական տեսանկյունից, երբ տուժողը խոցելի խմբի ներկայացուցիչ է,
- ընտանեկան բռնություն ԼԳԲՏ անձանց նկատմամբ. արձագանքման առանձնահատկությունները,
- ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար երկարատև աջակցության կազմակերպում,
- ընտանեկան բռնության ապաստարանների կառավարումն ու անհրաժեշտ պահանջները,
- ֆեմինիստական մոտեցումը սոցիալական աշխատանքում. առանձնահատկությունները և սկզբունքները, սոցիալական աշխատողի էթիկական կոդեքսը և հաշտությունը,
- ընտանեկան բռնության հետևանքները երեխաների վրա, հոգեբանական տրավմայի առանձնահատկությունները,
- միջմասնագիտական համագործակցությունը և մասնագետների պարտականությունների բաշխումն ընտանեկան բռնության դեպքերի վարման շրջանակներում:

Վերապատրաստման դասընթացներին մասնակցող մասնագետների համար կազմակերպվեցին նաև մասնագիտական հատուկ քննարկումներ.

- ընտանեկան բռնության մասին իրավական գիտելիքներ և հմտություններ իրավաբանների համար,
- պրակտիկ հմտություններ և գիտելիք սոցիալական աշխատողներին ընտանեկան բռնության վերաբերյալ,
- պրակտիկ հմտություններ և գիտելիք հոգեբաններին ընտանեկան բռնության վերաբերյալ:

against women



RESORT

Բռնության ենթարկված կանանց պաշտպանության և աջակցության մեխանիզմների արդյունավետության ապահովում

2019 թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում Կոալիցիան շարունակել է իր գործունեությունը՝ ապահովելու ընտանեկան բռնության, գենդերային հիմքով բռնության և խտրականության ենթարկված կանանց պաշտպանության և աջակցության մեխանիզմների արդյունավետությունը, կազմակերպել և իրականացրել է տարբեր հանդիպում-քննարկումներ որոշում կայացնողների՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, այլ պատկան մարմինների, ԱԺ պատգամավորների հետ, մասնակցել ջատագովության արշավների և միջոցառումների:

Աջակցության կենտրոնների կարիքների գնահատման հետազոտություն

Կոալիցիան ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների խթանում և պաշտպանություն» ծրագրի համատեղ իրականացման շրջանակներում 2019 թ.-ի մայիս ամսին իրականացրել է 6 ցերեկային կենտրոնների կարիքների գնահատում:

2018 թ.-ի սեպտեմբերին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը բանավոր որոշում կայացրեց ՀՀ տարածքում գործող ցերեկային կենտրոնները դարձնել նաև ընտանեկան բռնության աջակցման կենտրոններ: Կենտրոնների՝ ընտանեկան բռնության զոհերին տրամադրած աջակցության որակի և արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվեց սույն կարիքների գնահատումը: Ըստ կարիքների գնահատման հետազոտության ընթացքում հավաքված տեղեկատվության՝ կարող ենք եզրակացնել, որ ոլորտի բարելավման համար կան մի քանի հիմնական բացեր, և, հետևաբար, պետք է գործողություններ իրականացվեն այդ բացերը վերացնելու ուղղությամբ, մասնավորապես.

1. Ընտանեկան բռնության մասին օրենքի և համապատասխան մեխանիզմների (այդ թվում՝ իրավապահ մարմինների համար) վերանայում և վերամշակում՝ առավել հստակ և մանրամասն ընթացակարգերի մշակման և ներկայացման նպատակով:

2. Ոլորտի մասնագետների համար համապատասխան վերապատրաստումների և վերահսկման (սուպերվիզիայի) համակարգի մշակում և տրամադրում:
3. Ընտանեկան բռնության սոցիալական աջակցման կենտրոնների գործունեության և մատուցվող ծառայությունների մասին հանրային լայնամասշտաբ իրազեկման իրականացում:

«Քաղաքացիական հասարակություն-Ազգային ժողով համագործակցության հարթակ՝ հանուն կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների»

ՀՀ Ազգային ժողովի և ՕքսԵՁեն հիմնադրամի նախաձեռնությամբ մարտի 8-ին ԱԺ-ում տեղի ունեցավ «Քաղաքացիական հասարակություն-Ազգային ժողով համագործակցության հարթակ՝ հանուն կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» խորագրով միջոցառումը: Կոալիցիայի ներկայացուցիչները, որոնք ևս մասնակցում էին միջոցառմանը, իրենց ելույթներում անդրադարձան կանանց խնդիրներին: «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ համահիմնադիր Լարա Ահարոնեանը, խոսելով կանանց խնդիրներից, ներկաների ուշադրությունը հրավիրեց այն հարցի վրա,

որ կանայք բազմազան են. «Շատ անգամ, երբ կնոջ մասին ենք խոսում, մենք տեսնում ենք մի տեսակի կին՝ մայր, շատ անգամ քույր ու վերջ: Բայց ես ուզում եմ հիշեցնել, որ մենք նաև միայնակ մայրերն ենք, մենք նաև բանակում երեխա կորցրած մայրերն ենք, մենք նաև մայր դառնալ չուզեցողներն ենք, մենք նաև տարեցներն ենք, մենք նաև տրանս կանայք ենք, նաև լեսբի և բիսեքսուալ կանայք ենք, որ ուզում ենք, կամ չենք ուզում երեխա որդեգրել կամ ունենալ, մենք սահմանամերձ գյուղերում ապրող կանայք ենք,

աղքատներն ենք, մենք եզդի կանայք ենք, հաշմանդամություն ունեցող կանայք ենք, և երբ օրենքներ են մշակվում, մենք պետք է ուշադիր լինենք, և դուք բոլորդ, որպեսզի միայն մեկ կերպարի կանայք չօգտվեն այդ օրենքներից: Այսինքն՝ այս բոլոր կանայք են, որ ձեր մտքում պիտի գան՝ ներառելով այս ամենը, որ ասացի, նաև միացնելով դրան ՄԻԱՎ-ով ապրող կանայք, սեքս աշխատող կանայք և շատ ուրիշներ»:

Կոալիցիայի ներկայացուցիչ Զարուհի Հովհաննիսյանն էլ անադրադարձավ սեքսիզմի դրսևորումներին և նշեց, որ հաճախ են պատգամավոր կանայք հայտնվում հասարակության անարդարացի քննադատության թիրախում: «Հասարակությունն անողոք է կանաց նկատմամբ, ու հաճախ պատգամավորները ևս պաշտպանված չեն թիրախավորումից ու սեքսիզմի դրսևորումներից: Ուստի, մենք՝ կանանց իրավունքներով զբաղվողներս, միշտ լինելու ենք ձեր աջակիցներն ու պաշտպանները»: Միջոցառման ավարտին ներկաները ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն է համատեղել խորհրդարանի ու կանանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ուժերը՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովման [3]:

«Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով խորհրդարանական լսումներ ԱԺ-ում

Ապրիլի 5-ին ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի նախաձեռնությամբ և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ կազմակերպել էր խորհրդարանական լսումներ՝ «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով:

Հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանը ողջույնի խոսքում նշել է, որ լսումները Հայաստանի երրորդ համընդհանուր պարբերական դիտարկմանն ընդառաջ կարևոր հարթակ է հանդիսանալու ազգային և միջազգային գործընկերների հետ քննարկելու նախորդ դիտարկումից բխող առաջնահերթությունների ընթացքը, պարտավորությունների կատարման վիճակը, ինչպես նաև միջազգային պարտավորությունների ստանձնման հարցում առկա մարտահրավերները և մեր հետագա անելիքները: Նրա խոսքով՝ միջոցառումը նպատակ ունի խթանելու համագործակցությունը պետական իշխանության բոլոր մարմինների, ՀԿ-ների և միջազգային ու դիվանագիտական կառույցների միջև: Հանձնաժողովի նախագահի գնահատմամբ՝ խորհրդարանը կարևոր դերակատարություն ունի պետության ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման, այդ թվում ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկումից բխող առաջնահերթություններն ազգային օրենսդրության և քաղաքական գործընթացների մեջ ներառելու հարցում:

Կոալիցիան, Կոալիցիայի անդամ կազմակերպությունները ևս մասնակցել են սույն միջոցառմանը: Կոալիցիայի հաղորդակցման և արտաքին կապերի պատասխանատու Զարուհի Հովհաննիսյանն իր

[3] http://coalitionagainstviolence.org/hy/6797/

ելույթում կարևորել է Համընդհանուր պարբերական դիտարկման այլընտրանքային զեկույցների դերը և ընդգծել է, որ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերը՝ պաշտպանելու մարդու իրավունքները: Նա անհրաժեշտ է համարել հասարակական միավորումների հետ գործընկերային հարաբերությունների ձևավորումը:

«Մենք պետք է բաց և անկաշկանդ խոսենք և քննարկենք երկրում առկա խնդիրները՝ բոլոր խոցելի խմբերի վերաբերյալ՝ առանց խտրականության, և լուծման ճանապարհներ գտնենք միասին»:

«Ընտանեկան բռնության կանխարգելումը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ» ազգային համաժողով

«Ընտանեկան բռնության կանխարգելումը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով ազգային համաժողովը տեղի է ունեցել 2019 թ.-ի մայիսի 27-ին Երևանում: Ավելի քան 130 մասնակից Հայաստանի Հանրապետության ողջ տարածքից հավաքվել էին՝ միմյանց հետ քննարկելու ընտանեկան բռնության դեմ պայքարի իրավական հայեցակարգը, դրանում առկա խնդիրները, ինչպես նաև վեր հանելու «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կիրարկման իրավական բացերը, օրենքի լրամշակման հնարավորությունները:

Համաժողովի պատվիրակներն ու զեկուցողները, որոնց մեջ էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, փոխնախարարներ, ԱԺ պատգամավորներ, այլ պետական կազմակերպությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ մարզպետարանների սոցիալական աջակցության տարածքային կենտրոնների ներկայացուցիչներ, Եվրամիության պատվիրակության ղեկավարը, տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլք, համաժողովի ընթացքում ևս մեկ անգամ շեշտադրեցին, որ Հայաստանում ընտանեկան բռնության կանխարգելման, բռնության ենթարկված անձանց աջակցության և խնդիրների լուծման ուղղությամբ մեծածավալ աշխատանքի կարիք կա, և կարևորեցին բոլոր գործընկերների համագործակցությունն այս ոլորտում:

Համաժողովի ժամանակ քննարկվեցին ընտանեկան բռնության դեմ պայքարի իրավական հայեցակարգը, ընտանեկան բռնության հիմնախնդրի ընդհանուր իրադրությունը, «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կիրարկման ընթացքում առաջացած խնդիրներն ու առկա բացերը, ներկայացվեց օրենքի լրամշակման համար անհրաժեշտ առաջարկությունների փաթեթը:

«Շատ կարևոր է, որ ընտանեկան բռնության հիմնախնդրի վերաբերյալ խոսակցությունը լինի մարդակենտրոն, որպեսզի թվերի և մեխանիզմների հետևում չկորցնենք և չթաքցնենք բուն խնդիրը: Պետությունը դեռևս համարժեք չի արձագանքում այս դեպքերին: Ընտանեկան բռնության վերաբերյալ խոսակցությունը պետք է լինի անկեղծության տիրույթում»:

Ժաննա Անդրեասյան
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Ազգային համաժողովը կազմակերպվել էր ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների խթանում և պաշտպանություն» ծրագրի շրջանակներում: Համաժողովը կազմակերպվել էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ՝ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի հետ համագործակցությամբ:

Հին և նոր մարտահրավերներ

Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններն ու իրավապաշպանները, հատկապես նրանք, որոնք աշխատում են կանանց սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքի պաշտպանության ոլորտում, դեռևս շարունակում են Հայաստանում մնալ տարբեր՝ ծայրահեղական տրամադրված խմբերի թիրախում: Կին իրավապաշտպաններն ավելի վտանգված են ենթարկվելու բռնության հատկապես այն պատճառով, որ նրանք հաճախ մարտահրավեր են նետում ընդունված սոցիալ-մշակութային նորմերին, ավանդույթներին, ինչպես նաև հասարակությունում կնոջ դերին և դիրքին, կանացիության, սեռական կողմնորոշման վերաբերյալ առկա կարծրատիպերին: Հայաստանում կին իրավապաշտպանները հաճախ են ենթարկվում նմանատիպ բռնության և մշտապես աշխատում են ծայրահեղական խմբերի կողմից ֆիզիկական և/կամ վերբալ բռնության սպառնալիքների միջավայրում:

Պետությունը դեռևս թերանում է իրավապաշտպանների համար անվտանգ և նպաստավոր միջավայրի ապահովման, իրավապաշտպանների իրավունքների պաշտպանության երաշխավորման իր պարտավորություններում, որոնք ստանձնել է մարդու իրավունքների մի շարք միջազգային պայմանագրերի վավերացմամբ:

Մարտի 8-ին «Քաղաքացիական հասարակություն-Ազգային ժողով համագործակցության հարթակ՝ հանուն կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների» խորագրով միջոցառման ընթացքում տիկին Ահարոնեանը իր ելույթում խոսեց աղքատ, հաշմանդամություն ունեցող, միայնակ մայր, լեսբի, տրանս և բիսեքսուալ կանանց իրավունքների մասին, ինչի պատճառով նա ևս մեկ անգամ հայտնվեց օնլայն հարձակումների և ատելության խոսքի թիրախում:

2019 թվականի մարտի 11-ին Լարա Ահարոնեանը հաղորդում է տվել ՀՀ ոստիկանություն՝ հարձակումների, վիրավորանքների և ատելության խոսքի վերաբերյալ՝ պահանջելով գտնել և պատժել իր դեմ հարձակումների պատասխանատուներին: Այնուամենայնիվ, իրավապաշտպանների՝ ատելության խոսքի թիրախ դառնալու և ոստիկանություն հաղորդում տալու, ապա դրան հաջորդող շարունակական հարձակումների փորձը ցույց է տալիս իրավապաշտպանների անվտանգության ապահովման գործում վճռական և հրատապ քայլերի անհրաժեշտությունը: Ցավոք, իրավապաշտպանների կողմից ատելության խոսքի դեմ ոստիկանություն տրված հաղորդումներից որևէ մեկը չի բացահայտվել, և ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել, և ոստիկանության ու այլ իրավասու կառույցների անգործությունը միայն վատթարացնում է դրությունը, քանի որ տպավորություն է ստեղծվում, որ իավապաշտպանների նկատմամբ բռնությունները անպատիժ են մնում:

Ապրիլի 5-ին ԱԺ «Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի» մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ տեղի ունեցավ ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր պարբերական դիտարկման վերաբերյալ քննարկում, երբ ելույթների փուլում ելույթ ունեցավ տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող «Իրավունքի կողմ» ՀԿ նախագահ, տրանսգենդեր Լիլիթ Մարտիրոսյանը, նիստը նախագահող, ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանը բարձրաձայն իր վրդովմունքն արտահայտեց ելույթի առնչությամբ՝ նշելով, որ տրանսգենդեր անձանց խնդիրները օրակարգում ներկայացված չեն եղել, հետևաբար այդ թեմայի մասին խոսելը անհարգալից վերաբերմունք է իր և խորհրդարանի նկատմամբ: Նաիրա Զոհրաբյանի այս արձագանքը մի շարք կազմակերպություններ, այդ թվում՝ Կոալիցիան, գնահատեցին որպես խտրական և մարդու արժանապատվությունը նսեմացնող: Լիլիթ Մարտիրոսյանի նկատմամբ ատելության ալիքը շարունակվեց արդեն իսկ առցանց տիրույթում, նույնսիկ հնչեցին նրան սպանելու կոչեր, սակայն ոչ ոք մինչ օրս պատասխանատվության չի կանչվել:

Մայիսի 4-ին «Բուկինիստ» սրճարանում Կոալիցիայի անդամ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ն, որը Հայաստանում միակ իրավապաշտպան կազմակերպությունն է, որ մատուցում է մասնագիտացված ծառայություններ սեռական բռնության ենթարկված անձանց, կազմակերպել էր «Իմ

մարմինը անձնական է» գրքի շնորհանդեսը: Միջոցառման ընթացքում հանդիպման վայր են ներխուժել մոտ 25 անձ, որոնք խափանել են միջոցառումը: Նրանց շարքերում են եղել այնպիսի անձինք, որոնք տևական ժամանակ՝ 2013 թ.-ից սկսած, ապատեղեկատվություն, սպառնալիքներ և ատելության խոսք են տարածում կանանց իրավունքներով զբաղվող կազմակերպությունների, իրավապաշտպանների նկատմամբ: «Բուկինիստ» սրճարանի մուտքի մոտ մի շարք տղամարդիկ մասնակիցների ուղղությամբ ձվեր են նետել: Սակայն, ցայսօր ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել:

«Եվրոպայի խորհրդի կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան՝ Ստամբուլյան կոնվենցիան, 2019թ.-ի գարնանն ու ամռանը բուռն քննարկումների և շահարկումների առիթ է դարձել Հայաստանում: Այն անձինք և խմբերը, որոնք տարիներ շարունակ պայքարում են ընտանեկան բռնության մասին օրենք ընդունելու դեմ, կանանց և տղամարդկանց իրավահավասարության դեմ, ինչպես նաև տարածում են բազմաթիվ մանիպուլյացիոն տեղեկատվություն և նյութեր թե՛ ընտանեկան բռնության, թե՛ միջազգային կոնվենցիաների և օրենքների մասին, այժմ էլ պայքարում են Ստամբուլյան կոնվենցիայի վավերացման դեմ: Կոնվենցիայի քննադատությանը միացել են Հայ առաքելական եկեղեցին, քաղաքական և հասարակական գործիչներ: Օրինակ՝ Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նույնիսկ ստեղծեց դրա դեմ ստորագրահավաք հայտնի change.org հարթակում: Change.org-ը, սակայն, ջնջեց ստորագրահավաքը, ինչից հետո ստեղծվեց հատուկ կայք: Հայաստանը ստորագրել և վավերացրել է բազմաթիվ միջազգային փաստաթղթեր, որոնցից հերթականը Ստամբուլյան կոնվենցիան է:

Առանց վավերացման այն չի կարող լիարժեք գործել, մինչդեռ փաստաթուղթը սահմանում է կանանց և երեխաների դեմ բռնությունը բացառելու համար համապարփակ մատեցում:

****

Ընթացիկ տարվա երկրորդ կիսամյակում Կոալիցիան կշարունակի աշխատանքները վերոնշյալ ռազմավարական ուղղություններով:

«Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի աջակիցներ

«Քվինա թիլ Քվինա» հիմնադրամ

Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ

Հաշվետվության հեղինակ՝ Նվարդ Մարգարյան

Հաշվետվությունը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսական աջակցությամբ

© «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիա, 2019 թ.

www.coalitionagainstviolence.org